

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Տնտեսական բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 30-4. 2-2)

Հիմնական գործառույթները՝

1) Իրականացնում է նախարարության աշխատակազմի հաշվեկշռում առկա ավտոմեքենաների անխափան շահագործման, տեխնիկական սպասարկման և վերանորոգման աշխատանքները, ապահովում է ամենօրյա ուղեգրային թերթիկները, անհրաժեշտության դեպքում կատարում է լուծարվող հիմնական միջոցների փաստաթղթերի վերաձևակերպումը նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչությունում ու Հայաստան Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության պետական ավտոտեսչությունում.

2) Բաժնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է կառավարության որոշումների նախագծեր, որոնք նախօրոք համաձայնեցվում է շահագրգիռ նախարարների հետ:

3) Իրականացնում է Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենահանումը և բազմացումը.

4) կազմակերպում և հսկողություն է իրականացնում համակարգչային տեխնիկայի տպիչ սարքերի և բազմացման մեքենաների քաթրիչների լիցքավորման աշխատանքների նկատմամբ.

5) կազմակերպում է Նախարարության վարչական աշխատասենյակների գույքի տեղափոխման և վերանորոգման աշխատանքները.

6) Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

7) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

8) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Բաժնի պետի հանձնարարությամբ, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

9) իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է նաև՝

1) առնվազն միջնակարգ կրթություն, «Իրավական ակտերի մասին», «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքների, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000թ. հունիսի 12-ի «Լուծարման ենթակա հիմնական միջոցների դուրսգրման մասին կարգը հաստատելու մասին» թիվ 104-Ա հրամանի և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):

Ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 01. 08. 2018թ. :

Աշխատավարձի չափը՝ 95903 (ինսունհինգ հազար ինը հարյուր երեք) ՀՀ դրամ:

Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57, էլ. փոստ՝ lilit.baghdasaryan@minagro.am:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում Նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինողի անունով (դիմումի ձևը կցվում է),

- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի/ների/, վկայականի/ների/, աշխատանքային գրքույկի (առկայության դեպքում) պատճենները բնօրինակների հետ միասին,

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

- քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը,

- մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,

- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ՊԱՐՈՆ Գ. ԱՎԱԳՅԱՆԻՆ

..... - ից
դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

.....
դիմողի հասցեն, հեռախոսահամարը

.....
դիմողի անձնագրի սերան, համարը, երբ և ում կողմից է տրվել

Դ Ի Մ ՈՒ Մ

Ծանոթանալով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ Ձեզ ժամկետային աշխատանքային պայմանագրով նշանակել ինձ ՀՀ գյուղատնտեսության նախարարության

.....
.....
.....

(Ժամանակավոր թափուր պաշտոնի անվանումը, ծածկագիրը)

Ժամանակավոր թափուր պաշտոնում:

Հայտնում եմ, որ.

1. Համակարգչային և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

.....
(ունեմ, չունեմ)

2. Տիրապետում եմ համակարգչային ծրագրերին (Վինդոուզ, Վոռդ, Էքսել, Աքսես և այլն)

3. Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ

(ճանաչված են, ճանաչված չեն)

4. ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով

(տառապում են, չեն տառապում)

5. Այլ վճարովի աշխատանք (բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական և ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից)

(իրականացնում են, չեն իրականացնում)

6. Անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ

(գբաղվում են, չեն գբաղվում)

7. Անմիջական ենթակայության կամ վերահսկողության տակ մերձավոր ազգակցական կամ խնամիական կապերի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող) մեջ

(գտնվում են, չեն գտնվում)

Նախազգուշացված են՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

«-----» ----- 2018թ.